ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.2/21649-2024

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Կ-841-07.05.2024-ՊԻ-011/1) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները, լրամշակված նախագիծը, ամփոփաթերթը, ինչպես նաև նախագծում կատարված փոփոխությունների վերաբերյալ տեղեկանքը՝ գլխադասային հանձնաժողովում քննարկելու համար:

1. Նախագծի 1-ին հոդվածով նախատեսվող Օրենքի 48-րդ հոդվածում լրացվող նորմի բովանդակությունը չի համապատասխանում 48-րդ հոդվածի վերնագրին, քանզի վերջինս ոչ թե ՀՀ քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող, այլ «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի փորձաքրեագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունում աշխատանքի անցնող անձանց վարձատրության մասին է:

Հաշվի առնելով վերոշարադրյալը, ինչպես նաև հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջն առ այն, որ հոդվածների վերնագրերը համապատասխանում են հոդվածների բովանդակությանը, առաջարկում ենք նախագծի 1-ին և 2-րդ հոդվածների դրույթները միավորել և շարադրել որպես լրացվող նոր «Հոդված 49.1. «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի փորձաքրեագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունում աշխատանքի անցնող անձանց սոցիալական երաշխիքները» վերտառությամբ հոդվածի համապատասխանաբար 1-ին և 2-րդ մասեր:

Միաժամանակ առաջարկում ենք վերանայել նախագծի հոդվածների համարակալումը:

2. Նախագծի 2-րդ հոդվածով նախատեսվող Օրենքի 49-րդ հոդվածում նոր լրացվող 2-րդ մասում առաջարկում ենք «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ձևակերպումը փոխարինել «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ձևակերպմամբ՝ հիմք

ընդունելով համապատասխան նորմատիվ իրավական ակտի վերնագիրը:

3. Նախագծի 3-րդ հոդվածում «հուլիսի 1-ից» բառերն առաջարկում ենք փոխարինել «օգոստոսի 1-ից» բառերով՝ հաշվի առնելով ԱԺ–ում քննարկման ժամկետները:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ